Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼԻ ՊՈԵԶԻԱՆ

Իրավունք ունեին հայկական իրականության ռեակցիոն-հետադիմական կամ նույնիսկ լիբերալ-պահպանողական թևի ներկայացուցիչները «չարաղետ», «որոմնացան» և նման այլ բառերով պիտակավորել Նազարյանցի «Հյուսիսափայլ» ամսագիրը, որովհետև թե՛ իր արծարծած առաջադիմական գաղափարներով, և թե՛ անողոք քննադատությամբ այն ամենի, ինչ հին էր ու վնասակար, վերջինս միանգամայն նոր էջ էր բացում հայկական մամուլի պատմության և հասարակական կյանքի անդաստանում։ Անվերապահորեն կարելի է ասել, որ մեր պարբերականների երկար շղթայում չի եղել և ոչ մեկը, որի յուրաքանչյուր համար ընդունվեր այնպիսի օվսաննաներով կամ կատաղությամբ և այնքան բազմաբնույթ վեճեր ու մտքերի բախում առաջացներ, ինչպես այդ նկատում ենք «Հյուսիսափայլի» կապակցությամբ։ Եվ սա հասկանալի կդառնա, եթե արձանագրենք, որ այնտեղ էր հանդես գալիս մարտնչող հրապարակախոս Միքայել Նալբանդյանը, իսկ նրան «լրացնում էին» մեր նոր գրականության այնպիսի մեծություններ, ինչպիսիք էին Սմբատ Շահազիզն ու Ռաֆֆին, Գևորգ Բարխուդարյանն ու Հովհաննես Քուչուբեկյանը, Քերովբե Պատկանյանն ու Լերմոնտովի «Դևի» անզուգական թարգմանիչ Մանուկ Մադաթյանցը։ Ամսագրի գաղափարական միտվածությունն առավել քան հասկանալի կդառնա, եթե հավելենք, որ առաջին իսկ համարից սկսած, նրա խմբագիր-տնօրեն Ստեփաննոս Նազարյանցը հայտարարեց և հետագայում էլ բազմիցս կրկնեց, որ իրենք բրածո կուռքեր ու քարացած հեղինակություններ չեն ընդունում, որ անողոք պայքար են հայտարարում բոլոր տիպի «Եգիպտոսյան խորամանկ քուրմերին» ու «Չինեական պարիսպներին», որոնք դարեր ու հազարամյակներ շարունակ փակել են «լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ», այսպիսով արգելք հանդիսանալով նրանց գաղափարական հասունացման ու առաջընթացի համար։ Պատահական չէ այն հանգամանքը, որ «Հյուսիսափայլի» նկատմամբ տրամագծորեն հակառակ ծայրաբևեռում գտնվող Վենետիկի Մխիթարյանների «Բազմավեպը», այդ ամսագրի մասին իր ընթերցողներին առաջին անգամ տեղեկացնում է միայն 1863 թվականի սկզբներին, այսինքն՝ երբ «Հյուսիսափայլը» արդեն հինգ տարվա պատմություն ուներ, իսկ «Ճռաքաղի» կապակցությամբ՝ նրա լույս աշխարհ գալու առաջին տարվանից սկսած։

Ինչպես մարտական ու նոր գաղափարներով հագեցած էին ամսագրի տեսական-քննադատական ու հրապարակախոսական հոդվածները, այնպես էլ մարտական էր նրա ինքնուրույն ու թարգմանական պոեզիան։ Այս իմաստով էլ անպայման արժեքավոր և մեծ

կարևորություն ունեցող գործ է գրականագետ Մերի Սաղյանի կազմած, ծանոթագրած և գիտակ առաջաբանով ընթերցողներին ներկայացվող «Հյուսիսափայի պոեզիան» ծավալուն աշխատությունը (Երևան, 1956 թ., 451 էջ)։

Մեկից ավելի են եղել այն դժվարությունները, որոնք ծառացած են եղել Մերի Սաղյանի առջև, իր աշխատությունը հրատարակության պատրաստելու ընթացքում։ Նախ՝ հայ գրականության մեջ առաջին անգամ ընթերցող հասարակությանը պետք է ներկայացվեր մի ամբողջ ամսագրի բանաստեղծական մտքի լիակատար հավաքածուն, իր մեկնաբանություններով ու համապատասխան ծանոթագրություններով հանդերձ. աշխատանք, որը հեշտ լինել չէր կարող, որովհետև, եթե «Հյուսիսափայլում» կան, օրինակ, ինքնուրույն բանաստեղծություններ, որոնք ունեն «Ստ. Նազարյանց», «Գ. Բարխուդարյանց», «Ս. Շահազիզ», «Մ. Նալբանդյանց» կամ՝ «Կոմս Էմմանուել» ստորագրությունները, որի հետևանքով դրանց հեղինակային պատկանելությունն արդեն որևէ կասկած չի հարուցում, ապա նույն պարբերականում ամենևին հազվագյուտ չեն բանաստեղծություններ և անգամ պոեմներ, որոնք կամ անստորագիր են, կամ էլ ստորագրված են հաճախ մեկ տառից բաղկացած որևէ կեղծանունով։ Նույնն է նաև դրությունը «Հյուսիսափայլում» լույս տեսած թարգմանական պոեզիայի վերաբերյալ։ Այս դեպքում էլ, եթե ամսագրում կան «հայեցումներ», որոնք ունեն «Հայնրիխ Հայնե», «Բերանժե», «Շիլլեր», «Պետեֆի», «Ջիովաննի Քաստ» և նման բնույթի նշումներ, և հետևաբար, այս դեպքում ամեն ինչ որոշակի է, ապա նույն «Հյուսիսափայլում» բազմաթիվ են չափածո թարգմանություններ, որոնք հեղինակի անուն-ազգանվան փոխարեն սոսկ ունեն «Թարգմանություն գերմաներենից», կամ «Ի ֆրանսերենե», կամ ընդամենը «Թարգմանություն» և նույնիսկ՝ «Թարգ.» նշումները։ Այսքանից հետո հեշտ է պատկերացնել, թե բանասիրական ինչպիսի քրտնաջան աշխատանք էր պահանջվում Մերի Սաղյանից, պարզելու հայկական բանաստեղծությունների և եվրոպական թարգմանությունների հեղինակների ով լինելը. մի գործ, որը գլուխ է բերված գոհացուցիչ հաջողությամբ։

Խնդիրը, սակայն, ունի իր ոչ պակաս կարևոր հետևյալ կողմը։ «Հյուսիսափայլի» ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական պոեզիան ուշադրությամբ քննելիս, իսկույն աչքի է զարնում գրական այն միտումնավորությունը, որն այնպես որոշակիությամբ վարում էր խմբագիր Ստեփաննոս Նազարյանցը։ Եթե, օրինակ, ռուս բանաստեղծներից ամսագրի էջերում թարգմանաբար ներկայացվեցին Պուշկինը, Լերմոնտովը, Բենեդիկտովը, ապա նույն ամսագրի էջերում ամենևին տեղ չգտան, ասենք՝ Լոմոնոսովը, Կանտեմիրը, Տրեդիակովսկին կամ

Սումարոկովը։ Եթե ֆրանսիական գրականությունից հայ ընթերցողին էր ներկայացվում Բերանժեն, ապա հայ ընթերցողը «Հյուսիսափայլի» էջերում իր մայրենի լեզվով բնավ չկարդաց նույն ֆրանսիական գրականությունից, ասենք, Պիեր Կորնելից կամ Բուալոյից, կամ Ժան Ռասինից և ոչ մի գործ։ Եթե, վերջապես, գերմանական բանաստեղծներից «Հյուսիսափայլում» տեղ գտան Շիլլերը, Հայնեն, Գյոթեն, ապա ամսագիրն իր էջերում ոչինչ չհրատարակեց Ավգուստ Կոցեբուից կամ Կլոպշտոկից և այլն։ Բնականոն կերպով ծագող «ինչո՞ւ» հարցին պատասխանել կարողանալու համար Մերի Սաղյանը պետք է հրաշալի տեղեկացված լիներ վերոհիշյալ երկրների՝ գոնե 19-րդ դարի գեղարվեստական գրականությանն ու գրական-հասարակական կյանքին, հանգելու համար այն ճիշտ եզրակացությանը, որ իբրև ժամանակաշրջանի առաջավոր մտածողներ, Նազարյանցն ու նրա համախոհները իրենց համար արդեն պարզել էին, որ կլասիցիզմը, որպես գեղարվեստական մտածողության որոշակի որակ, արդեն սպառել է իրեն, գրական ասպարեզ էր իջել պատմականորեն ավելի նորն ու առաջավորը՝ ռոմանտիկական ուղղությունը, և հետևաբար, «Հյուսիսափայլն» իր նպատակներից մեկն էլ համարում էր այդ բնույթի ինքնուրույն ու թարգմանական գեղարվեստական ստեղծագործություններով հայկական իրականության պայմաններում ռոմանտիզմին ըստ ամենայնի զարկ տալն ու գրական այդ ուղղությունը խրախուսելը։ Խելամիտ մի քաղաքականություն, որը մի անգամ ևս բնութագրում է «Մոսկովյան ամսագրին», որպես իր ժամանակի հայկական առաջադիմական պարբերականի, նաև գեղարվեստական գրականության ասպարեզում։

Եվ վերջապես, ձեռնամուխ լինելով «Հյուսիսափայլում» հրատարակված չափածո ստեղծագործությունները հավաքելու և «ի տիպ անձանացուցանելու» աշխատանքներին, Մերի Սաղյանը նպատակահարմար է գտել տալ այդ պարբերականին իրենց մասնակցությունը բերած շուրջ քսան հայ բանաստեղծների ու թարգմանիչների համառոտ կենսագրություն-դիմանկարը։ Այդ աշխատանքն էլ, ինչպես դժվար չէ կռահելը, «հեշտերի» շարքը դասվել չի կարող։ Որովհետև, եթե համեմատաբար առատ են կենսագրական և «աշխատանքային» բնույթի տեղեկությունները ասենք՝ Ստեփաննոս Նազարյանցի, Միքայել Նալբանդյանի, Ռաֆֆու կամ Սմբատ Շահազիզի մասին, ապա նույնը բոլորովին չի կարելի ասել Վարդան Սուլթանյանցի, Մանուկ Մադաթյանցի, և մանավանդ «Այլ հեղինակներ» վերտառության ներքո զետեղված Աբրահամ Նազարյանի, Սողոմոն Մերկուլյանի, Գեղամ Սմբատյանի և այլոց մասին։ Եվ յուրաքանչյուր բաժնի սկզբում զետեղված կենսագրական ուրվագծերը կարդալիս, ակնհայտ է դառնում այն չարքաշ աշխատանքի ներքին բովանդակությունը, որը կատարել է Մերի Սաղյանը։ Ամենատարբեր պարբերականներից, տարեցույցերից ու գրական ալմանախներից, այլևայլ բնույթի

կենսագրական բառարաններից ու հնօրյա ժողովածուներից հավաքելով մի աննշան փաստ, մի փոքրիկ տվյալ, մի ուշագրավ տեղեկություն այս կամ այն «հյուսիսափայլականի» մասին, լրացնելով դրանք իրարով ու ամբողջացնելով մեկը մյուսով, գրականագետն, ի վերջո, կարողացել է ստեղծել նրանց գերակշիռ մասի՝ հնարավորինս ամբողջական կենսագրությունները։ Եվ եթե գրքում կան հեղինակներ, որոնց վերաբերյալ տեղեկությունները չեն անցնում մի քանի տողից, կամ եթե հաճախ ենք հանդիպում «ՈՒրիշ ոչ մի տեղեկություն չկարողացանք գտնել» (էջ 441), կամ՝ «Հեղինակի մասին հնարավորություն չեղավ տեղեկություն հավաքել» (էջ 443), և այս բնույթի այլ խոստովանություններ, դա միայն նշանակում է, որ անգամ «Հյուսիսափայլի» կապակցությամբ հայ գրականագիտությունն ու բանասիրությունը դեռ շատ անհետաձգելի անելիքներ ունի, և որ Մերի Սաղյանի ««Հյուսիսափայլի» պոեզիան» լինելով այս ասպարեզում արված առաջին նոր առաջընթաց քայլերից մեկը, ամենևին էլ չի կարող վերջինը համարվել։ Մնում է միայն ցանկանալ, որ իր բնույթով առայժմ եզակի այս աշխատությունը անպայման ունենա իր հաջորդները, որ նույն ձևով հավաքվեն և լույս ընծայվեն ասենք՝ «Մեղվում» կամ «Մշակում» կամ դեմոկրատական թևին պատկանող մեր մյուս պարբերականներում տպագրված գեղարվեստական ստեղծագործությունները։

Այնուամենայնիվ, Սաղյանի աշխատությունը զերծ չէ մի քանի թերություններից, որոնց մասին նշելն ավելորդ չի լինի։

Ինչպես վկայում է աշխատության բնույթը և նրա վերնագիրը, այնտեղ պետք է ամփոփված լինեին այն բոլոր չափածո գործերը, այսինքն՝ բանաստեղծություններն ու թարգմանությունները, որոնք զետեղված են եղել «Հյուսիսափայլ» ամսագրում։ Սակայն, առաջնորդվելով անհասկանալի մի սկզբունքով, հատկապես թարգմանություններ բնագավառում, Սաղյանն իր գրքում չի զետեղել մի շարք ստեղծագործություններ, որոնք տպագրել է «Հյուսիսափայլը», և որոնք ամսագրի թարգմանական բաժնի ընտիր նմուշները կարող են համարվել։ Չեն զետեղվել, օրինակ, Ալֆիերիի «Ֆիլիպ II, Իսպանիայի թագավոր», Բոնսարի «Լուկրեցիա», Կալդերոնի «Հաստատամիտ արքայազնը», Շիլլերի «Մեսինական հարսը» և մի շարք այլ գործեր։ Շիլլերի «Կասսանդրա» գործի Նազարյանցի թարգմանությունը, որը տպագրվել է «Հյուսիսափայլում», Սաղյանը զետեղել է իր աշխատության մեջ։ Սակայն նույն Շիլլերի գրած, նույն Նազարյանցի թարգմանած և նույն «Հյուսիսափայլում» զետեղված «Թուրանդոտը», չգիտես ինչու, դուրս է մնացել, և այլն։

Ապա, չափազանց ազատ է վարվում Մերի Սաղյանը ամսագրում զետեղված բանաստեղծությունների հետ, որն արդեն վնաս է բերում աշխատությանը։ 1859 թվականին «Հյուսիսափայլը» տպագրել է Վ. Սուլթանյանի թարգմանած չորս բանաստեղծությունները։ Սաղյանը բերել է դրանցից միայն մեկը, մյուսների համար նշելով, որ նրանք գեղարվեստորեն թույլ են և «միանգամայն օտարոտի են «Հյուսիսափայլի» ոգուն» (էջ 435)։ Ստացվում է, որ ամսագրի խմբագիր-տնօրեն Ս. Նազարյանցն ավելի վատ էր հասկանում իր ամսագրի «ոգուց», այսինքն այն բանից, թե ինչը կարելի է տպագրել, իսկ ինչը՝ ոչ, քան մոտ հարյուր տարի նրանից հետո ապրող Մերի Սաղյանը։ Նույն 1859 թվականին «Հյուսիսափայլը» տպագրում է Գ. Բարխուդարյանի «Մտածությունք» բանաստեղծությունը, որն ավարտվում է ներբողանման մի ութնյակով, ժամանակի հայոց կաթողիկոս Մատթեոսի հասցեին։ Սաղյանը այդ բանաստեղծությունը զետեղել է իր աշխատության մեջ, փոփոխելով նրա վերջին մասը, և այս կապակցությամբ ծանոթագրությունում նշում է. ««Մտածությունք» բանաստեղծության վերջին հատվածը ենթարկված է փոփոխության և հանված է Մատթեոս կաթողիկոսի անունը» (էջ 424)։ Հարց է ծագում, իսկ ինչո՞ւ։ Մի՞թե կարելի է տվյալ հեղինակի ստեղծագործությունը փոփոխել այնպես, ինչպես այդ կամենում է աշխատությունը կազմողը։ Մի՞թե կարելի է խախտել տվյալ հեղինակի հեղինակային իրավունքը, որն, ինչպես հայտնի է, անկապտելի է։

Ապա, ««Հյուսիսափայլի» պոեզիան» աշխատության՝ ընդհանուր առմամբ հաջող կազմված ծանոթագրություններում երբեմն հանդիպում ենք հապճեպ արված եզրակացությունների։ Օրինակ, «Արաքս և Կուր գետերի գանգատը» բանաստեղծության մեջ նշված է. «Առաջին անգամ տպագրվել է «Հյուսիսափայլի» 1861 թվականի 6-րդ ամսատետրակում Ջալալեդդին ստորագրությամբ։ Ենթադրվում է, որ այս կեղծանվան տակ թաքնված է Ռուբեն Հասան-Ջալալյանը» (էջ 432)։ ՈՒրեմն՝ փաստորեն ունենք միայն մի ենթադրություն։ Դրանով հանդերձ՝ Սաղյանը վերոհիշյալ բանաստեղծությունը անվերապահորեն հայտարարում է Ռ. Հասան-Ջալալյանի գործը և ամենուրեք, իր վերլուծությունների ընթացքում, դիտում է որպես այդպիսին։

«Կյանք» և «Առանձնություն» բանաստեղծությունների առիթով տրված ծանոթագրության մեջ կարդում ենք. «Առաջին անգամ տպագրվել են «Հյուսիսափայլի» 1861 թվականի 6-րդ ամսատետրակում, Ե. ստորագրությամբ։ Բացի անվան սկզբնատառի նմանությունից, մենք ուրիշ փաստ չունենք Երեմիա Սահակյանին վերագրելու այս բանաստեղծությունները» (էջ 433)։ Չնայած այսպիսի անկայուն հենարանին, Սաղյանը նույն բանաստեղծություններն ամենուրեք

ներկայացնում է որպես Երեմիա Սահակյանին պատկանող ստեղծագործություններ և այլն։ Նման օրինակներ կարելի է մի քանիսն էլ նշել, որը, հասկանալի է, խրախուսել չի կարելի։

Եվ վերջապես, «Հյուսիսափայլում» զետեղված բանաստեղծությունները՝ իր աշխատության մեջ վերատպելիս, Մերի Սաղյանը, ցավոք, չի ցուցաբերել հարկավոր ուշադրություն, որի հետևանքով գրքում առկա են մի շարք վրիպակներ, որոնք իմաստային կամ հանգավորման զգալի աղճատումներ են առաջացնում։ Հիշենք դրանցից մի քանիսը։ «Հյուսիսափայլ», 2-րդ ամսատետր (1858 թ.) - «Որ յուր **հոր ու մորը** խոսքը», Սաղյանի մոտ՝ «Որ յուր **հոր մոր** խոսքը» (էջ 36)։ «Հյուսիսափայլ» 6-րդ ամսատետր «Բազուկներս **տարածված էր** առ քաջն այն»։ Սաղյանի մոտ՝ «Բազուկներս **տարածած էր** առ քաջն այն» (էջ 246)։ «Հյուսիսափայլ» 5-րդ ամսատետր (1860 թ.) «**Ձգում** է անուշ այս խնկի բուրվառ», Սաղյանի մոտ՝ «**Ձգտում** է անուշ այս խնկի բուրվառ» (էջ 69)։ «Հյուսիսափայլ» 6-րդ ամսատետր (1861 թ.) - «**Քննիր** ուշիմ մարդ կյանքդ անցավոր», Սաղյանի մոտ՝ «**Քնիր** ուշիմ մարդ կյանքդ անցավոր» (էջ 249) և այլն։ Բնագրագիտական բնույթի նման վրիպակներ կարելի է մի քանիսի էլ նշել։

Ընդհանուր առմամբ հաջողված այս աշխատությունը ցանկալի էր տեսնել նման տեքստաբանական վրիպակներից ու նշված առանձին թերություններից զերծ։ Այս հանգամանքը հատկապես կկամենայինք ընդգծել, որովհետև մեզ մոտ արդեն ընթացք է վերցրել հայ դասականների գիտա-քննական հրատարակության շնորհակալ աշխատանքը (ճշգրտված բնագրի պատրաստում, համապատասխան առաջաբան և ծանոթագրություններ), ուրեմն մեր դիտողությունները կարող են հետաքրքրել այդ գործը կատարող ուրիշներին էլ։

Գրական թերթ, 1957, №27, հուլիսի 23